«Հաստատում եմ»_____
Երևանի պետական համալսարանի
ակադեմիական/
ուս.գծով պրոռեկտոր
Է.Վ.Ասրիյան

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի՝ 2022 թ. նոյեմբերի 16-ին կայացած հ. 3 նիստի արձանագրությունից:

Նիստին մասնակցում էին հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Ա. Աբաջյանը, բ. գ. թ., դոց. դոց. Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը, Վ. Պետրոսյանը, Ս. Գրիգորյանը, ասիստ. Ե.Գրիշկյանը, Ա. Կարապետյանը և այլք:

<u>Օրակարգում-</u> Մարիամ Արթուրի Ադամյանի՝ «Անգլերենի և հայերենի «Տարիք» իմաստային դաշտի լեզվաճանաչողական վերլուծություն» Ժ.02.02. «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության քննարկումը:

<u>Լսեցին</u> – Մարիամ Արթուրի Ադամյանի՝ «Անգլերենի և հայերենի «Տարիք» իմաստային դաշտի լեզվաճանաչողական վերլուծություն» ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

<u>Արտահայտվեցին</u>– բ.գ.դ., պրոֆ.Ա. Աբաջյանը, բ. գ. թ., դոց.դոց. Ն. Դիլբարյանը, Ա. Ավետյանը, Ե.Գրիշկյանը, Ն. Պարոնյանը և այլք:

Եզրակացություն

Մարիամ Ադամյանի ատենախոսությունը վերաբերում է ճանաչողական լեզվաբանությանը, որը արդի լեզվաբանական կարևորագույն ուղղություններից է: Ճանաչողական գործընթացը և հոգելեզվաբանական գործոնները չափազանց կարևոր դեր են խաղում լեզվի համաժամանակյա գործառության և տարաժամանակյա փոփոխությունների բնույթի և ուղղվածության որոշման հարցում: Դեռևս Վ. ֆոն Հումբոլդտից սկիզբ առնող և Սեպիր-Ուորֆի վարկածի մեջ առավել հստակ

արտահայտված այն տեսակետը, որ լեզուն մեծապես պայմանավորում և ձևավորում է մարդու մտածելակերպն ու աշխարհընկալումը՝ ազդելով անհատի գիտակցության ու վարքի վրա, վերջին տասնամյակներում լեզվաբանության մեջ սկսել է վերարծարծվել նոր թափով: Այդ հարցն արդ առավել մեծ սրությամբ է դրվում հատկապես ճանաչողական լեզվաբանության մեջ, որը լայն առումով փորձում է ուսումնասիրել աշխարհի լեզվական պատկերի կաղապարումը խոսողների (լեզվակիրների) գիտակցության մեջ և դրա արտահայտությունը լեզվի միջոցով:

Այսպիսով՝ Մ. Ադամյանի ատենախոսության թեման միանգամայն արդիական է, իսկ բուն աշխատանքը՝ ողջունելի նախաձեռնություն և ուշագրավ զուգադրական-լեզվաճանաչողական վերլուծության փորձ անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի վերաբերյալ: Հեղինակին ընդհանուր առմամբ հաջողվել է լուծել իր առջև դրված հիմնական խնդիրը՝ կատարելով ըստ կարելվույն հանգամանալից հետազոտություն: Մ. Ադամյանի ատենախոսությունն իր երկու արժեքավոր հավելվածներով՝ ա. «Անգլերենի «տարիք» իմաստն արտահայտող բառերի ցանկ» և բ/ «Հայերենի «տարիք» իմաստն արտահայտող բառերի ցանկ», վկայում է, որ հեղինակը գիտական պատշաճ նորույթ և կարևորություն ունեցող քննություն է կատարել՝ ուսումնասիրելով և համեմատելով անգլերենում և հայերենում «տարիք» հասկացությանը վերաբերող բառային միավորները ոչ միայն զուտ լեզվաբանական տեսանկյունից, այլև հոգեբանության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության արդի ուղղությունների ընդունված կաղապարների ու մոտեցումների լույսի ներքո: Առավել ուշագրավ են աշխատանքի երկրորդ՝ ««Տարիք» իմաստ արտահայտող բառային միավորների իմաստային առանձնահատկություններն անգլերենում և հայերենում», ինչպես նաև երրորդ՝ ««Տարիք հասկացության ընկալումը անգլոամերիկյան և հայկական լեզվամշակույթներում» գլուխները: Այստեղ կատարված ուսումնասիրվող դաշտի բառային միավորների իմաստների բաղադրիչային վերլուծությունը, դրանց բառակազմական առանձնահատկությունները, զուգադրվող լեզուների միավորների թարգմանական յուրահատկությունների բացահայտումը վկայում են, որ Մ. Ադամյանը խորամուխ է եղել հայերենի և անգլերենի բառապաշարի իմաստաբանական և բառակազմական

ընդհանրությունների և տարբերությունների վերհանման գործի մեջ՝ հարուստ տեսական գրականության ընդգրկմամբ: Վերջին երրորդ գլխում ամփոփված դատողությունները անգլոամերիկյան և հայկական լեզվամշակույթների վերաբերյալ ներկայացնում են երկու լեզուներում առկա կայուն և նկարագրական զուգորդումները, որ առնչվում են «տարիք» իմաստային դաշտին: Այս գլխի նյութը հիմնված է անգլիախոս և հայախոս հարցվողների պատասխանների վերլուծության և համեմատության վրա:

Գնահատելով կատարված որակյալ, միջգիտակարգային բնույթ և աղբյուրներ ունեցող աշխատանքը՝ ուզում ենք կատարել մի քանի դիտարկում, որոնք բնավ չեն ստվերում կատարված քննության որակը:

Մ. Ադամյանի ատենախոսության վերաբերյալ մեր հիմնական դիտողությունները ներկայացնենք հետևյալ կետերում:

1. Ատենախոսության *Ներածության* մեջ արդեն նշվում է, որ «տարիք» հասկացությունը ատենախոսն ուղղակիորեն ձգտում է կապել Նեյլ Հոուվի և Ուիլյամ Շտրաուսի հանրահայտ «Սերունդների տեսության» և դրա առանցքային սահմանումների հետ, աշխատանքի 1-ին գլխի՝ «Տարիք» հասկացության ըմբռնումը տարբեր գիտություններում», 1.2 ենթաբաժինը հենց այդպես էլ կոչվում է, այստեղ մանրամասն ներկայացվում է սերնդային քառաբաժանը իր որակային բնութագրիչներով, եզրաբանությամբ՝ 1. Իդեալիստ/ մարգարեներ, 2. Ակտիվիստ/քոչվորներ, 3. Հերոս/քաղաքացիականներ, 4. Արվեստագետ/հարմարվողներ: Աշխատանքի ողջ շարադրանքում Նեյլ Հոուվի և Ուիլյամ Շտրաուսի սույն տեսության ըմբռնումներ պարբերաբար վկայակոչվում են, *Եզրակացության* մեջ էլ ամրագրվում է, որ այս տեսության եզրաբառերը հարստացրել են անգլերենի և հայերենի «տարիք» հասկացության բառապաշարը (123 էջ): Կարծում ենք, սակայն, որ այս տեսության լեզվաճանաչողական բաղադրիչը գերագնահատված է, տեսության առանցքում «տարիք» հասկացությունը շատ հարաբերական է արտահայտված, ինչպես ինքը՝ ատենախոսն է նաև նշում, սերնդի մեջ շեշտվում է ընդհանրականը, այստեղ հերոսները և՛ նորածին են, և՛մանուկ, և՛ դեռահաս, և՛ պատանի, և՛ երիտասարդ, և՛ միջին, և՛ հասուն, և՛ ծեր, տարեց, ավագ կրտսեր...., ինչպես նաև իդեալիստները, արվեստագետները ու ակտիվիստները:

Ուստի այս տեսության մանրամասնումը դառնում է հավելուրդային, դրանք պետք է կրճատել և սեղմել հնարավորինս: Ատենախոսի *Եզրակացությանը* Դ կետի պնդումը, թե «Սերունդների տեսությունը» արդեն իսկ համալրում է լեզուների բառային ֆոնդը նոր բառերի ու հասկացությունների ներմուծմամբ (Generation theory, General issue, Millennials, idealist, reactive, hero, artist, իդեալիստ, ակտիվիստ, հերոս, արվեստագետ, հազարմյակի սերունդ, X, Y, Z սերունդներ և այլն», համոզիչ չէ, որովհետև բացի տառային պայմանանշաններից՝ *X, Y, Z սերունդներ*, նման բառերն ի սկզբանե առկա են բոլոր լեզուների բառապաշարներում, և դրանց եզրույթային կիրառությունն էլ *տարիք* հասկացության հետ չի առնչվում, այլ հոգեբանական, բարոյական, մարդաբանական որակների, որոնք բնորոշ են մարդու հնարավոր բոլոր տարիքային խմբերին, այսինքն՝ վերտարիքային են: Եզրակացության կետը ևս խմբագրման կարիք ունի:

2. Էջ 105-ում նշվում է երկու միտում՝ 1. Հայկական լեզվամշակույթում «ես»-ի վրա հիմնված նյութական զուգորդումները 18-ն են, անգլիականում՝ 3-ը, ապա՝ 2. Հայկական կենցաղում երբեմն անծանոթներին դիմում են *հայր, մայր, մորաքույր, քեռի, եղբայր, քույր* բառերով, որը գրեթե բացակայում է անգլերենում: Նշենք, որ դիմում են ոչ թե «*հայր, մայր*», այլ «*հայրիկ* և *մայրիկ*» բառերով, իսկ «*եղբայր*» և «*քույր*» բառերը հիմնականում իրենց բարբառային-ժողովրդախոսակցական ձևերով են դիմելաձև դառնում՝ «ապեր, ախպեր/ախպերս, քուր/քուրս»: Ուղիղ գրական տարբերակներով դրանք՝ իբրև դիմելաձև, կիրառական չեն:

3. Թեև ատենախոսը շատ հաճախ լեզվաճանաչողական և իմաստային տեսանկյունից ուշագրավ զուգադրական վերլուծության է ենթարկում անգլերենի և հայերենի համապատասխան լեզվական միավորները, բայց երբեմն իմաստային բաղադրիչների անհրաժեշտ վերլուծությունը բացակայում է, ինչպես, օրինակ, իմաստի բաղադրիչային վերլուծության դեպքում, որտեղ թվարկվում է անգելերեն և հայերեն համապատասխան բառերի ցանկը և պարզապես նշվում է նրանցից յուրաքանչյուրի իմաստը (էջ 63-68), բայց համեմատվող միավորների՝ բառիս բուն իմաստով իմաստային բաղադրիչների վերլուծություն և զուգադրական քննություն չի կատարվում: Կարծում ենք՝ ավելի ճիշտ կլիներ այդ երկու լեզուների համապատասխան բառային ցանկը թվարկելու փոխարեն

հնարավորինս խմբավորել իմաստով համեմատաբար համարժեք միավորները երկու լեզուներում և, ըստ այդմ, կատարել այդ առանձին բառային փնջերի կամ զույգերի իմաստային բաղադրիչների զուգադրական քննություն:

4. Լավ կլիներ, եթե ատենախոսը փորձեր իր որոշ դատողությունները ներկայացնել համապատասխան հիմնավորումով և դա լուսաբանող, հաստատող օրինակներով: Այսպես, նա, խոսելով այն մասին, որ իմաստների բաղադրիչային վերլուծության է ենթարկել միայն գոյականները՝ ավելացնում է՝ «...քանի որ ըստ մեզ, սույն մեթոդի կիրառումն ավելի արդյունավետ է գոյականների նյութի վրա...» (էջ 63): Սակայն նա չի բացատրում, թե տվյալ մեթոդը ինչո՞ւ և ինչո՞վ արդյունավետ չէ մյուս խոսքի մասերի պարագայում:

5. Կարծում ենք ատենախոսին հույժ օգտակար կլիներ Լավրենտի Հովհաննիսյանի «Գրաբար բառապաշարի իմաստային խմբերի քննություն» մաս 2-րդ գիրքը (Եր. 2008), որտեղ առանձին քննված են *ծնունդ, կյանք, մարդու տարիքային անվանումներ* հասկացությունների բառային նշանակումները, ընդ որում փաստենք, որ քննված բոլոր այս շարքերի գրաբարյան ծագման բառերը նույնությամբ պահպանվել են արդի արևելահայերենում, որովհետև իմաստային հիշյալ դաշտն իր ենթադաշտերով շատ կայուն է:

Ամփոփելով նշենք, որ ատենախոսին ընդհանուր առմամբ հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները՝ կանխագծված շրջանակում: Աշխատանքը կատարված է տեսական, գործնական հարուստ նյութի ընդգրկմամբ. ուսումնասիրված են թեմային առնչվող շուրջ 91 հայ և հիմնականում օտարազգի հեղինակների գործեր, ինչպես նաև համացանցային կայքեր, բառարաններ (ընդհանուր 126 աղբյուր): Ատենախոսը ձգտել է նյութի քննությունը կատարել լայն ընդգրկմամբ, բարեխղճորեն և գիտական լրջությամբ: Արդյունքում ստացվել է հետաքրքիր և փաստառատ ուսումնասիրություն՝ նյութի ներկայացման ամբողջականությամբ, մանրամասնությամբ, փաստարկումների հիմնավորմամբ, լեզվական իրողությունների ներկայացմամբ և դրանց հեղինակային ճիշտ ընկալմամբ:

Վերոբերյալ դիտողությունները չեն ստվերում աշխատանքի գիտական արժեքը, ուստի հավարտ նշենք, որ Մ. Ադամյանի ատենախոսությունը գրված է քննվող նյութի և նրան վերաբերող տեսական գրականության քաջ իմացությամբ, հեղինակը տիրապետում է լեզվաբանական քննության, նկարագրության սկզբունքներին և մեթոդներին: Ատենախոսը լուծել է առաջադրված խնդիրը՝ գիտական պատշաճ մակարդակով ներկայացնելով հետազոտության ընթացքը և ստացված արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Մարիամ Արթուրի Ադամյանի՝ «Անգլերենի և հայերենի «Տարիք» իմաստային դաշտի լեզվաճանաչողական վերլուծություն» Ժ.02.02. «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունն իր առաջադիր խնդիրների շրջանակով, դրանք լուծելու գիտական խորությամբ և բերած նորույթով բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները: Սեղմագիրը պատշաճ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

ԵՊՀ հայոց լեզվի պատմ. և ընդհանուր լեզվաբ. ամբիոնի վարիչ՝ Ա. Աբաջյան

Նիստի քարտուղար՝ Վ. Մուրադյան

Ամբիոնի վարիչի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար՝ Մ. Հովհաննիսյան